ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկվող մատակարարման կազմակերպման և անցկացման կարգի մասին» Պայմանագրի ստորագրման նպատակահարմարության մասին

Ժամանակակից մարտահրավերներին և սպառնալիքներին հակազդելու գործում ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների համագործակցության հետագա կատարելագործման նպատակով՝ 2023 թվականի սեպտեմբերի 15-ին, ԱՊՀ մասնակից-պետությունների ներքին գործերի նախարարների Խորհուրդը համաձայնություն է տվել՝ Տաջիկստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կողմից /ի կատարումն 2022 թվականի սեպտեմբերի 8-ին Չոլպոն-Աթա քաղաքում կայացած ԱՊՀ ՆԳՆ Խորհրդի Որոշման/ մշակված, «ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկվող մատակարարման կազմակերպման և անցկացման կարգի մասին» պայմանագրի նախագծին:

Տվյալ նախագիծը վերջնական քննարկվել և լրամշակվել է 2024թ. մայիսի 23-ին՝ առցանց ձևաչափով կայացած ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների փորձագիտական խմբի կողմից:

Նախագիծն անցել է համապատասխան ներպետական համաձայնեցման ընթացակարգ:

Պայմանագիրը նախատեսում է՝

- վերահսկվող օբյեկտների, ինչպիսիք են՝ թմրանյութեր, զենք, մշակութային, պատմական, արվեստի արժեքներ և այլն, պետական սահմանով ապօրինի տեղափոխման ոլորտում կատարվող հանցագործություններին հակազդելու ուղղությամբ արդյունավետ միջոցների ձեռնարկում,

-ԱՊՀ մասնակից-պետությունների իրավասու մարմինների կողմից համագործակցության առկա իրավական մեխանիզմների կատարելագործում:

Պայմանագրի հիմնական սկզբունքներն են՝

-մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանում,

-միջազգային վերահսկվող մատակարարման մասնակցող անձանց անվտանգության և պաշտպանության ապահովում,

-Կողմերի ազգային օրենսդրության պահպանում,

-միջազգային վերահսկվող մատակարարում անցկացնելու ընթացքում վերահսկվող օբյեկտի պահպանության և վերահսկման ապահովում:

Միջազգային վերահսկվող մատակարարման հիմնական խնդիրներն են՝

-միջազգային, միջտարածաշրջանային հանցավոր կապերի, վերահսկվող օբյեկտների տեղաշարժի ուղիների և խողովակների հայտնաբերումը,

-հանցագործությունների հայտնաբերում, կանխարգելում, նախականխում և բացահայտում, ինչպես նաև հանցագործությունները նախապատրաստող, կատարող և կատարած անձանց հայտնաբերումը,

-Կողմերի ազգային անվտանգության, հասարակության, մարդու և քաղաքացու ազատություններին սպառնալիքներ առաջացնող իրադարձությունների և գործողությունների մասին տեղեկատվության ստացումը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը, «ԱՊՀ մասնակից պետությունների իրավասու մարմինների կողմից միջազգային վերահսկվող մատակարարման կազմակերպման և անցկացման կարգի մասին» Պայմանագրի ստորագրումը գտնում է նպատակահարմար:

ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ ***Արփինե Սարգսյան***